ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2021թ. սեպտեմբերի 28-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ՀՄԱԾՁԲ-21/1-1 պայմանագրին լրացում կատարելու մասին

Ք. Երևան 21-ը հոկտեմբերի 2021թ.

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Գնորդ), ի դեմս գործադիր տնօրեն Հ. Մովսիսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա մի կողմից, և

«Թի Էն Սաունդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ նաև՝ Վաճառող), ի դեմս տնօրեն Թ. Մարտիրոսյանի, ով գործում է ընկերության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 437-րդ հոդվածի և 466-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները, ինչպես նաև Կողմերի միջև 2021թ. սեպտեմբերի 28-ին ստորագրված թիվ ՀՀՀ-ՀՄԱԾՁԲ-21/1-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետի պահանջները, ստորագրեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

Կողմերը հանաձայնեցին.

1. Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հեռուստատեսային արտադրանքի նկարահանումների համար անհրաժեշտ լրացուցիչ տեխնիկայի վարձակալության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունները և վճարել դրա համար:
2. Սույն Համաձայնագրով նախատեսված Ծառայությունները մատուցվում են մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ:
3. Սույն Համաձայնագրով նախատեսված Ծառայությունների ընդհանուր արժեքը կազմում է 2 700 000 (երկու միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, համաձայն Հավելված 1-ով սահմանված նախահաշվի:
4. Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ 30 աշխատանքային օրվա ընթացքում:
5. Պայմանագրի ցանկացած դրույթ կիրառելի է սույն Համաձայնագրի նկատմամբ այնքանով, որքանով այլ բան նախատեսված չէ սույն Համաձայնագրով:
6. Պայմանագրի մնացած դրույթները մնում են անփոփոխ:
7. Համաձայնագրի Հավելված 1-ը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:
8. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

9. Սույն Համաձայնագիրը ստորագրված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

«Թի էն Սաունդ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մոլդովական 44/3շ., բն. 58
ՀՎՀՀ՝ 00881939
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 20504222602 21001

Թ. Մարտիրոսյան
Տնօրեն

Հավելված 1
2021 թվականի սեպտեմբերի 28-ին ստորագրված թիվ
ՀՀՀ-ՀՄԱԾՁԲ-21/1-1 պայմանագրին լրացում կատարելու մասին Համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ծառայության անվանումը	Քանակ	Արժեք/ՀՀ դրամ
Լուսային սարքավորումների Վարձակալության ծառայություններ	1	300,000
Ալյումինե կոնստրուկցիաների Վարձակալության ծառայություններ	1	500,000
ԼԷԴ էկրանների Վարձակալության ծառայություններ	1	1,500,000
Ձայնային սարքավորումների Վարձակալության ծառայություններ	1	400,000

«Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» ՓԲԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Գ. Հովսեփյան 26, Նորք 0047
ՀՎՀՀ՝ 01540062
«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 2470102796740000

Հ. Մովսիսյան
Գործադիր տնօրեն

«Թի էն Սաունդ» ՍՊԸ

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Մոլդովական 44/3շ., բն. 58
ՀՎՀՀ՝ 00881939
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 20504222602 21001

Թ. Մարտիրոսյան
Տնօրեն